

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ
Վ. Գաբրիելյան

ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան

28 հունիսի 2011 թ.

1 հունիսի 2011 թ.
N 25

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«6.1-րդ հոդվածի առաջին մասում նշված ապրանքները մինչև նույն մասով սահմանված ժամկետների լրանալն օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի) դեպքում վճարումը հետաձգված՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքների համար ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ենթակա են վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի վճարներ»:

Օրենքի 6.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Եթե մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված համապատասխան ժամկետի ավարտը նույն ժամանակաշրջանի ընթացքում առաջացած՝ հարկ վճարողի պետական բյուջեի հանդեպ ԱԱՀ-ի վճարման պարտավորության մարված գումարը պակաս է ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների գումարից, ապա տարբերությունը հարկ վճարողի կողմից այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում ենթակա է վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի գումար»:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն առաջացող պարտավորությունները հարկ վճարողների կողմից կատարվել են տարբեր կերպ (հարկ վճարողների մի մասը պարտավորության գումարները վճարել են որպես մաքսային մարմինների կողմից գանձվող գումարներ, իսկ մյուս մասը՝ որպես հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող գումարներ)՝ *պաշտոնապես պարզաբանում եմ*.

1. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն առաջացող պարտավորության գումարները վճարվում են պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի գումար՝ համապատասխան գանձապետական հաշվին:

2. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մա-

սերի համաձայն առաջացող պարտավորության այն գումարները, որոնք վճարվել են պետական բյուջե որպես մաքսային մարմինների կողմից գանձվող գումարներ՝ հաշվանցվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով, դեպքերում և չափերով: Օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկի գումարի հաշվանցումը արտացոլվում է վճարման հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում՝ որպես ԱԱՀ-ի դեբետի ավելացում:

3. Այն անձինք, որոնք մինչև սույն պարզաբանման հրապարակվելը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով առաջացող պարտավորությունը չեն կատարել (հետաձգված ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե են վճարել՝ որպես հարկային մարմինների կողմից հավաքագրվող ԱԱՀ-ի գումար, կամ հետաձգված ԱԱՀ-ի գումարն ընդհանրապես պետական բյուջե չեն վճարել) և մինչև հետաձգման ժամկետի ավարտը ապրանքների օտարման գործարքի մասով առաջացած՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունը արտացոլել են հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում՝ ԱԱՀ-ի գումարների վերահաշվարկներ կարող են չկատարել, եթե օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը կատարելու դեպքում մաքսային մարմիններին վճարվող ԱԱՀ-ի ամբողջ գումարը կլիներ հաշվանցման ենթակա: Այս դեպքում օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գումարի նկատմամբ տույժեր առաջանալու դեպքում դրանք ենթակա են վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից հավաքագրվող ԱԱՀ-ի գումարներ:

4. Այն անձինք, որոնք մինչև սույն պարզաբանման հրապարակվելը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով առաջացող պարտավորությունը չեն կատարել (հետաձգված ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե են վճարել՝ որպես հարկային մարմինների կողմից հավաքագրվող ԱԱՀ-ի գումար, կամ հետաձգված ԱԱՀ-ի գումարն ընդհանրապես պետական բյուջե չեն վճարել) և մինչև հետաձգման ժամկետի ավարտը օտարված ապրանքների մասով առաջացած՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունը արտացոլել են հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում, սակայն այդ անձինք օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը կատարելու դեպքում իրավունք չէին ունենա հաշվանցելու մաքսային մարմինների միջոցով պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի ամբողջ գումարը կամ դրա մի մասը՝ հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, որում հետաձգված ԱԱՀ-ի գումարի այն մասը, որը օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պարտավորությունը կատարելու դեպքում ենթակա չէր լինի հաշվանցման, արտացոլում են ԱԱՀ-ի հաշվարկի ԱԱՀ-ի դեբետի պակասեցում տողում:

Այս դեպքում օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գումարի նկատմամբ տույժեր առաջանալու դեպքում դրանք ենթակա են վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից հավաքագրվող ԱԱՀ-ի գումարներ:

5. Սույն պարզաբանման 3-րդ կետում նշված դեպքում, ինչպես նաև 4-րդ կետին համապատասխան ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ ներկայացնելու դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ԱԱՀ-ի գումարի մասով պարտավորությունը կհամարվի մարված: Սույն կետում նշված դեպքերում հարկ վճարողը հարկային կամ մաքսային մարմիններ չի դիմում, իսկ կատարված հաշվարկների համապատասխանությունը սույն պարզաբանմանը արձանագրվում է հար-

կային մարմնի կողմից անցկացված ստուգման կամ մաքսային մարմինների կողմից անցկացված հետքացթողումային հսկողության ընթացքում:

6. Սույն պարզաբանման 4-րդ կետին համապատասխան ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ չներկայացնելու դեպքում ապրանքների ներմուծման մասով օրենքով սահմանված կարգով որոշվող պարտավորությունների (այդ թվում՝ ապրանքների ներմուծման գործարքի մասով ԱԱՀ-ի գումարի, օրենքով սահմանված տույժերի) հաշվարկը կատարում են մաքսային մարմինները՝ հարկային մարմնի կողմից կատարված ստուգման կամ մաքսային մարմինների կողմից անցկացված հետքացթողումային հսկողության արդյունքներով արձանագրված տվյալների հիման վրա:

7. Եթե հարկ վճարողի կողմից Օրենքի 6.1 հոդվածի 2-րդ մասով առաջացած պարտավորության գումարները վճարվել են պետական բյուջե՝ որպես հարկային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ-ի վճարներ և ներմուծված ապրանքի օտարման կամ օգտագործման իրավունքով այլ անձի հանձնելու օրվա դրությամբ հարկ վճարողն ունեցել է հետաձգված ԱԱՀ-ի գումարի և հաշվարկված տույժերի հանրագումարը գերազանցող գումարով գերավճարի մնացորդ, ապա այդ դեպքերում Օրենքի 6.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված տույժերը չեն հաշվարկվում:

8. Եթե հարկ վճարողի կողմից Օրենքի 6.1 հոդվածի 4-րդ մասով առաջացած պարտավորության գումարները նույն մասով սահմանված տասնօրյա ժամկետում վճարվել են պետական բյուջե՝ որպես հարկային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ-ի վճարներ, ապա այդ (տասնօրյա) ժամկետի ավարտից հետո տույժեր չեն հաշվարկվում:

9. Օրենքի 6.1 հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով առաջացած պարտավորության գումարները, որոնք վճարվել են պետական բյուջե՝ որպես հարկային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ-ի վճարներ՝

ա) օրենքով սահմանված ընդհանուր կարգով, դեպքերում և չափերով հաշվանցվում են, եթե վճարման արդյունքում առաջացած գերավճարները, հարկային մարմնի կողմից կազմված եզրակացության հիման վրա, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետական հաշիվներով վերաձևակերպվել են որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի պարտավորության գումարներ: Այս դեպքում հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է այդ գումարների վերաձևակերպման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով,

բ) օրենքով սահմանված ընդհանուր կարգով, դեպքերում և չափերով կարող են հաշվանցվել նաև այդ գումարները հարկային մարմիններին վճարելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, եթե ԱԱՀ-ի վճարումը հաստատող փաստաթղթերով նշված է, որ այդ վճարումները Օրենքի 6.1 հոդվածին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի վճարումներ են և հարկ վճարողը հարկային մարմնին ներկայացրել է դիմում հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարը մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի հետաձգված պարտավորության մարմանը ուղղելու համար (այս դեպքում նույնպես հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարները հարկային մարմինների կողմից կազմվող եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետական հաշիվներով վերաձևակերպվում են որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի պարտավորության գումարներ):